



հորը, մորը և իրեն՝ 14-ամյա Ժաննային: Շարասյունը կանգ է առնում Եվլախում, այստեղ էլ նրանց և մյուս բախտակիցներին լցնում են ապրանքատար վագոնների մեջ, և գնացքը շարժվում է: 15 օր հետո գնացքը կանգ է առնում Սիգրանի կայարանում, և նրանց քշում են բաղնիք: Հրամայված էր 20 բուլետում հոգալ անձնական հիգիենայի կարիքները և վերադառնալ գնացք: Բայց հազիվ էր մայրը հասցրել լվանալ աղջկա երկար մազերը, երբ ներս խուժեցին զինվորները և այդպես թրջված ու կիսամերկ նորից լցրին ապրաքատար վագոնների մեջ, ու գնացքը շարժվեց:

Մեկ ամիս գիշեր-ցերեկ գնացքի անիվների աղմուկը սղոցում էր նրանց լսողությունը: Անորոշությունից ու վախից նրանց նյարդերը ծայրաստիճան պրկվել էին: Աղջիկն ինչ իմանար, թե ինչ հույզեր են փոթորկում հոր սիրտը, ով ավելի շատ ծխում էր, քան խոսում: Նա միտքն աշխատում էր տենդագին, փորփրում ապրած կյանքը՝ հասկանալու, թե որտեղ է խոտորվել ուղին, իր որ սխալի համար է հատուցելու ոչ միայն ինքը, այլև ընտանիքը: Իսկ մտքի էկրանին ապրած կյանքն էր, անցյալը՝ մինչև ձերբակալության օրը: Այս ինչ անեծք է հետապնդում իրեն... Ծխախոտի ծխի քուլաները նրա հիշողության մեջ արթնացրին իրենց ծխացող գյուղի պատկերը:

...1919 թվականին թուրքերը մտան իր ծննդավայրը՝ Ղայբալիշեն: Հրի ու սրի մատնեցին ողջ գյուղը: Արյունը հոսում էր գետի պես, իսկ թուրքը կանգնել ավերակ եկեղեցում՝ հոխորտում էր. «Եթե սուրբ է ձեր հավատը, գյավուրնե՛ր, թող ձեր աստվածը մեզ պատժի»: Իսկ հայի աստվածը չէ՞ր լսում, թե՞ չէր տեսնում... Ու թուրքն արյան հոսից հարբած՝ վայրենի խրախճանք ու նախճիր էր սարքել իր ծննդավայրում: Իր տան շենին մորթվեց հայրը՝ Վրթանեսը, որ գյուղի վերջին քահանան էր: Ինքը՝ Շուշիի ռեալական ուսումնարանի սանը, մի կերպ անտառներով հասավ գյուղ, փրկեց մորն ու քրոջը և եղբոր երեխաներին:

Ու մինչ ուշքի կգար ճակատագրի այդ անողորմ հարվածից, երկիրը ներքաշվել էր մի այլ հոսանքապտույտի մեջ: Նոր կարգեր, նոր հույսեր, հայրենիքի փրկության նոր ուղիներ: Իր ողջ գիտակցական կյանքը նա նվիրել է արցախյան դպրոցի կայացման գործին: Աշխատել է Արցախի բազմաթիվ գյուղերում, հետո հաստատվել Ստեփանակերտում, աշխատել թիվ 3 դպրոցում՝ որպես աշխարհագրության ուսուցիչ, ապա և տնօրեն: Դա մնաց նրա վերջին աշխատանքային հասցեն... Հուշերը ծվատում էին սիրտը, իսկ ամենից շատ հոգին մղկտում էր ազատության մեջ ապրած վերջին օրվա համար, երբ ինքը աղջկան՝ Ժաննային արգելեց բարձրանալ այգու կեռասենին և քաղել հազիվ կարմրին տվող պտուղները: Հիմա, ո՞վ գիտե, մեկ էլ ե՞րբ աղջիկը կճաշակի իրենց այգու բարիքները:

Իսկ աղջկա ուղեղում շաղափի պես պտտվում էր միայն մի միտք՝ որտե՞ղ կշարունակի ուսումը և արդյո՞ք նորից դպրոց կգնա: Դպրոց, այնուամենայնիվ, գնաց: Ունեցավ շատ ուսուցիչներ, որոնց թվում կային նշանավոր պրոֆեսորներ, ովքեր ճակատագրի չար կամոք նույնպես հայտնվել էին աքսորավայրերում: Պատանեկան հոգին սիրեց ու կապվեց ուսուցիչներին ու դպրոցական ընկերներին, իսկ հետո մի տեսակ կարոտով էր հիշում նրանց, իր ապրած ու չապրած պատանեկությունը: Ամեն անգամ, երբ նա վերհիշում էր իր կյանքի այդ շրջանը, հեռավոր տայգայի խորքերում կորած պատանեկության, թե՛ այնտեղ սրբացած հոր շիրիմի համար մղկտում էր հոգին և աչքերի թացն ավելանում էր...

Աքսորավայր հասնելու օրից մինչև մահ հայրը նամակներ էր գրում «վերներին»՝ հուսալով արդարություն և գուրթ, փորձելով պարզել աքսորվելու՝ մինչև վերջ էլ իրեն անհայտ մնացած պատճառները: Արցունքն աչքերին՝ Ժաննան վերհիշում էր, թե անսովոր աշխատանքից ինչպես էին արյունոտվում ու վերքերով պատվում հոր՝ գրչին ու գրքին սովոր մատները: 1952-ին, չլիմանալով քարհանքի ծանր ու հյուծիչ աշխատանքին, Համազասպ Ղուկասյանն իր մահկանացուն կնքեց աքսորավայրում՝ կնոջն ու աղջկան

թողնելով մենակ ու անօգնական և թաղվեց իր ուժահատ ձեռքերով զցած այգու դիմաց (երախտագետ տեղաբնակների ցանկությունն էր դա, որպեսզի այգու բարիքները վայելելիս միշտ հիշեն այն հայ ուսուցչին, ում պարտական են ցրտադիմացկուն ու բերքառատ խնձորի նոր ծառատեսակների համար):

Անցնում է փորձություններով ու զրկանքներով լի ևս մի քանի տարի: Եվ ահա մի ուրբաթ, երբ սովորականի նման աքտորականներին հավաքում և ստուգում էին անցկացնում, նրանց հայտնում են, թե ազատ են և կարող են վերադառնալ իրենց տները: Դա 1955-ին էր: Անսպասելի ուրախությունից քիչ մնաց զլուխը կորցնել: Բայց տուն գնալն այնքան էլ հեշտ չէր: Իրենք փող չունեին, իսկ պետության հոգը չէր, թե ինչպես պիտի նրանք՝ այդ թշվառները, հազարավոր կիլոմետրեր ճանապարհ կտրեին և հասնեին նախկին բնակության վայրերը: Խրուշչովյան տարիներն էին, երբ ողջ երկիրը, թվում էր, թե ցնորվել էր եզիպտացորենի բումից: Անգամ հեռավոր Սիբիրում դրա մշակությունը պարտադիր էր: Եվ ժաննան ստիպված սկսում է աշխատել եզիպտացորենի դաշտում, իսկ մայրը, որ շնորհալի դերձակի համբավ էր ձեռք բերել տեղացիների շրջանում, կարուձևով էր վաստակում հանապազօրյա հացը: Միայն 1956-ին յոթ տարվա տառապանքից հետո, մայր ու աղջիկ վերադարձան Ստեփանակերտ: Իսկ այստեղ նոր հիասթափություններ էին սպասում նրանց. տունն ավերված ու թալանված, անտեր ու անշուք դիմավորեց նրանց: Սակայն չընկճվեց աղջիկը, չընկրկեց ոչ մի դժվարության առջև: Մեկնեց Բաքու և ընդունվեց մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը: Ավարտելուց հետո վերադարձավ Ստեփանակերտ: Նախ աշխատանքի անցավ մոտակա գյուղերում, հետո ամուսնացավ, երեխաներ ունեցավ: 69-ին մշտապես հաստատվեց Ստեփանակերտում և սկսեց աշխատել հ.1 մանկապարտեզում: Նախադպրոցական այդ հիմնարկում դաստիարակված շատ սաներ այսօր էլ սիրում ու հիշում են ժաննա Ղուկասյանին՝ արտասովոր ճակատագրի և անպարտելի ոգու տեր այդ կնոջը:

Սա տասնյակ հազարավոր խեղված ճակատագրերից միայն մեկի՝ ժաննա Ղուկասյանի կյանքի պատմությունն էր, որն ընդհատվեց հանկարծակի, երեք տարի առաջ... Կյանք, որի լավագույն տարիները մոլորվել-մնացել են հեռավոր Ալթայի երկրամասում, իսկ հոգով նա միշտ այնտեղ էր՝ սրբատեղի դարձած հոր շիրիմի հետ...

Մելանյա Միլոնյան